Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔԸ" ՆԵՐԿԱՅ 1893 ԹՈՒԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ներկայ 1893 թուին «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կըհրատարակուի այժմեան դիրքով և նոյն ծրագրով։ Թերթը կըստանայ «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներ։

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երևանեան հրապարակի և Միջի-Փողոցի անկիւն, քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1893 Г.
НА ГАЗЕТУ
„НОВОЕ ОБОЗРѢНІЕ"
(десятый годъ изданія).

Газета будетъ выходить ежедневно, по прежней программѣ.

Городская подписка принимается въ конторѣ редакціи, Головинскій проспектъ, 12. Гг. иногородные обращаются по слѣдующему адресу: Тифлисъ, въ редакцію газеты „Новое Обозрѣніе".

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к.; за границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Редакторъ В. М. Тумановъ
Издатель А. М. Тумановъ

(Ф) (3—2)

ԱԶԴ

Փրկչի Ծննդեան պայծառ տօնի և վաղուան Մկրտութեան պատճառով «Արձագանքի» հետևեալ 4-րդ համարը լոյս կըտեսնի կիւրակէ, յունվարի 10-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակութեան աջակցութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիֆլիզի Ա. և Բ. կարգի վաճառականներ։ Նաւթային արդիւնաբերութեան ընդհանուր ժողովը։ Պ. Ալօիզի Միզանդրու 25-ամեայ յոբելեանը։ Մոսկուայից։ Շոգեկառքով փոխադրութեան գները Թիւրքիայի մէջ։ Արտասահմանի մի հայ լրագրից։ Նախարարութեան հոգացողութիւնը սովի ենթարկուած ներքին նահանգների համար։ Ղըրղըզներից։ Նիժ գիւղը։ «Երուանդ Բ», Վինների փառօքի պահեստը։ Ժողովրդական լուսաւորութիւնը և կրթութիւնը Կովկասեան նահանգներում։

ԳԻՏՈՒԹԻՒՆ և ԱՐՈՒԵՍՏ։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։—Կ. Կոստանեանց։ Յովհաննէս Թլկուրանցին և իւր տաղերը։ Նոր ժողովածու. Ա. պրակ։ Նոր ժողովածու. Բ. պրակ։

ՖԵԼԻԵՏՕՆ.—Երկու սիրահարների մենաստանը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ։

ԶԱՆԱԶԱՆ.
ՏԵՂԵԿԱՏՈՒ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ անգամն է ահա, որ հայ եկեղեցին Փրկչի Ծնունդն ու Մկրտութիւնը, քրիստոնէութեան այս ամենամեծ հանդէսները տօնում է սգի մէջ համակուած լինելով։

Կաթողիկոսական գահը դեռ ևս ծածկած է սգի քօղով, թէև ամեն կողմից հասնող տեղեկութիւնները յոյս են տալիս, որ այդ սուգը շուտով կըվերացուի։

Շատ սակաւ է հայ ազգը սպասել Ս. Էջմիածնի գահակալին այնպիսի մեծ անհամբերութեամբ, ինչպէս այժմ և երբէք գահի վրայ ունեցած յոյսերն այնքան մեծ չեն եղած որքան այժմ։

Այս անհամբերութիւնն ու մեծ յոյսն ակներև ապացոյց են թէ ազգի կրօնական գիտակցութիւնը արթնացած է։

Չէ կարելի չխոստովանել նաև որ այս փաստերը միևնոյն ժամանակ ցոյց են տալիս, որ ազգի հոգևոր ծարաւը յագուրդ չէ գտել այն չափով, որքան պահանջում է այդ հասարակութեան ներկայ վիճակը։

Հասարակութեան աչքերն ուղղած են Ս. Էջմիածնի գահի վրայ։ Նա սպասում է, որ այնտեղից կը բղխի կենդանի ջրի աղբիւրը, որ շունչ և հոգի կը տայ եկեղեցուն, որի մէջ մակաղած է ազգը։

Ցաւալի չի կարելի ժխտել որ ներկայ բոպէն հասարակութեան համար մեծ կշիռ ունի մեր եկեղեցու վերաբերութեամբ։ Եկեղեցին, որ ապահովուած է իւր արտաքին իրաւունքների վայելելու գործում—վերջին կէս դարուայ ընթացքում բարձի թողի է արել իւր ուժի և զօրութեան ամենագլխաւոր հիմունքը—այն է հաւատացեալների սրտերը։ Միայն և եթ սոցա վրայ իշխելու մէջ է այն կենդանի Բանի զօրութիւնը, որին՝ Առաքեալի խօսքով յաղթահարել չէ կարող ոչ ոք և ոչինչ։

Որպէս զի եկեղեցին և նորա վարդապետութիւնը ազդեն հաւատացեալների խղճի վրայ, հարկաւոր է որ եկեղեցու պաշտօնեաները, որոնք «երկրի աղն» են, ըստ Աւետարանի, կարող լինին ղեկավարել հասարակութիւնը, իսկ այդ ղեկավարութեան բարոյական իրաւունք ունենալու համար պէտք է նոքա ամեն կողմով բարձր լինին հասարակութիւնից։

Կաթողիկոսն ինքը միայնակ, իւր բոլոր բարի ցանկութիւններով հանդերձ, չի կարող եկեղեցու պաշտօնեաների վիճակը բարձրացնել առանց հասարակութեան եռանդուն աջակցութեան և օգնութեան։

Չի կարելի ասել, որ մեր նախնիք չեն հասկացել այս կարիքը։ Յաւիտենական յիշատակի արժանի Լազարեանք իրանց ճեմարանում առանձին բաժին հիմնեցին, ուր երիտասարդները պէտք է պատրաստուէին եկեղեցու արժանաւոր սպասաւոր լինելու համար։ Սակայն այս բաժինը փակուեցաւ առանց մի աչքի ընկնող ազդեցութիւն ունենալու հայ եկեղեցականների բարւոքման վրայ։

Այս բարի սկզբնաւորութեան անյաջողութեան պատճառն այն էր, որ ճեմարանի հիմնադիրները, ժամանակի ոգուն համաձայն, կարծում էին, թէ հնարաւոր է մարդուս ապագայ հակամիտութիւնն ու ձգտումները որոշել նորա մանկութեան ժամանակ։ Երեխայութիւնից պատրաստում էին ապագայ սպաներ, ծովակալներ, դատաւորներ, ինչու պէտի հնարաւոր չլինէր պատրաստել ապագայ քահանաներ։ Բայց խնդիրն այն է որ անհնարին է եկեղեցու պաշտօնեայ լինել առանց կոչումն ունենալու. եւ չենք ասում որ արտաքին կողմից եւ քահանայ լինելը մի նախանձելի «կարիէրա» չէ ներկայացնում։

Հոգևորականութեան նիւթական դրութեան ապահովութիւնը՝ ահա այն առաջին քայլը, որ քահանաների բարոյական մակերևոյթը պէտք է բարձրացնէ և տաղանդաւոր ու շնորհալի մարդիկ գրաւէ դէպի այդ պաշտօնէութիւնը։ Ցերեկուայ լոյսի պէս պարզ է, որ այս բարւոքման բանալին գտնվում է հասարակութեան ձեռքում և սերտ կապուած է նորա հասունութեան և ինքնագործունէութեան աստիճանի հետ։ Չենք կարող ի դէպ չնկատել, որ, օրինակ, Պետերբուրգի հայ հասարակութիւնը, որ տասն հազարների եկամուտ ունի, մինչև այժմ չէ կարողացել իւր եկեղեցիների ու այն բազմաթիւ երիտասարդների համար, որոնք կրթվում են քաղաքային և զինուորական դպրոցներում, այնպիսի քահանաներ պատրաստել, որոնք կարողանային ուսանող երիտասարդներին հոգևոր ղեկավար հանդիսանալ։

Անշուշտ միմիայն նիւթական դրութեան բարւոքումը բաւական չէ դէպի քահանայութեան ասպարէզը ընտիր ձիրքերով օժտուած մարդիկ գրաւելու։ Սորա հետ զուգընթաց պէտք է փոփոխութեան ենթարկուին քահանաների և կուսակրօն հոգևորականութեան մէջ եղած յարաբերութիւնները։ Այն ձևով, ինչպէս այս յարաբերութիւններն այժմ են ներկայանում, շատ բան կայ բարեփոխելու՝ թէ իրաւանց ցանկալի հաւասարութեան տեսակէտից և թէ այդ յարաբերութիւնների առաքելական աւանդութիւնների և եկեղեցու շահերի հետ համաձայնեցնելու տեսակէտից։ Այս խնդրի մէջ բոլոր ցանկալի բարեփոխութիւններն ի հարկէ մեծաւ մասամբ կախուած կը լինին կաթողիկոսի նախաձեռնութիւնից և բարի ցանկութիւններից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչպէս երևում է Թիֆլիզի վաճառականական վարչութեան գրքերից 31-ն յունվարի 1893 թուի Թիֆլիզի առաջին և երկրորդ կարգի (գիլդի) վաճառականների թիւը հասնում է 753-ի, որոնցից 16-ը առաջին կարգի առևտրականներ են, իսկ 677-ը—երկրորդ կարգի։ Առաջինները վճարել են վաճառականական վարչութեան պահպանութեան և նորա այլ պէտոյքների համար 2628 ռուբլի, իսկ երկրորդները—8801 ռուբլի։

* * *

Յունվարի 3-ին կայացաւ «Եղբ. Միրզոյեանների և ընկ.» անուն կրող Նաւթային արդիւնաբերական ընկերութեան ընդհանուր ժողովը նախագահութեամբ պ. Աղէքսանդր Մնանեանի և մասնակցութեամբ բաժնետէրերի, որոնք ներկայացնում էին ընկերութեան 1,6000,000 ռուբլու դրամագլուխ։ Առևտրական բանկի ներկայացուցիչ էր այս ժողովում—պ. Միքայէլ Թամամշեանը, իսկ Փոխադարձ Վարկի Ընկերութեան—պ. Աբգար Յովհաննիսեանը։ Ի միջի այլոց երևեցաւ, որ բաժնետէրերի թւում կայ նաև Կարնոյ Սանասարեան վարժարանը, որ 10,000 ռուբլու գումարի բաժնետոմսերի տէր է։

Խորհրդածութեան առարկան էր վարչութեան իրաւունք տալու խնդրամատոյց լինել տէրութեան առաջ, որ թոյլ տրուի Ընկերութեան մինչև 800,000 ռուբլու պարտատոմսեր (օբլիգացիա) դուրս թողնել՝ Ընկերութեան նաւթային հողերի արդիւնաբերութիւնը ընդարձակելու համար։ Ընկերութիւնն այս խնդիրը բազմակողմանի կերպով քննելուց յետոյ ընդունեց վարչութեան յիշեալ առաջարկութիւնը և բացի այս որոշեց երեք մարդ ընտրել բաժնետէրերից, յանձնարարելով վարչութեան սոցա հետ խորհրդակցել այն խնդիրներում, որոնք վերաբերում են նաւթի ծախելու նկատմամբ երկարժամանակեայ դաշնագրեր կապելուն։ Ապա ընտրուեցան և այդ անձինք, որոնք լինելու են մի ներկայացուցիչ Փոխադարձ Վարկի Ընկերութեան, մի ներկայացուցիչ Առևտրական բանկի և իշխ. Նիկողայոս Արղութեանը։ Նիստը՝ 10 ժամին սկսուելով, օրինակելի ղեկավարութեամբ առաջ ընթացաւ և գոցուեցաւ $2^1/_4$ ժամին։

* * *

Կիւրակէ յունվարի 3-ին մեր քաղաքում տօնուեցաւ պ. Ալօիզի Միզանդրոյ 25-ամեայ երաժշտական-մանկավարժական գործունէութեան յոբելեանը։

Պ. Միզանդրին տեղական երաժշտական ընկերութեան հիմնադիրն է և բազմաթիւ աշակերտներ և մանաւանդ աշակերտուհիներ ունի պատրաստած, որոնք դաշնամուր են նուագում։ Յօբելեարը բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ „ստացաւ ի միջի այլոց և Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչից, որին նուիրած ունի մի մազուրկա։ Ի պատիւ նորա արտիստիկական ընկերութիւնը մի հացկերոյթ տուեց։ Բացի այս յարգելի պ. Միզանդրին ստացաւ հետևեալ ընծաները.

Մի արծաթեայ քնար—կայսերական երաժշտական ընկերութեան Թիֆլիզի բաժանմունքից։ Այս Ընկերութեան դասատուների կողմից մի արծաթեայ պսակ։ Երաժշտական ընկերութեան աշակերտուհիներից մի շքեղ ալբօմ, որ յօբելեարին մատուցին օր. օր. Աննա Տուլայևա, Թամարա Միրիմանեանց և Նունէ Ասլամազեանց։ Արտիստիկական ընկերութիւնից մի պսակ և արծաթեայ աչցետոմս։ Պ. Կ. Ալիխանեանցից—համալսարանական ժետօն ոսկեայ շղթայով։ Մի ծխախոտի արծաթեայ աման—օր. օր. Ա. Չիթախեանից և Հ. Իզմիրեանից։ Մի արծաթեայ թէյի սերվիզ—օր. օր. Իշխ. Բեհբութեանից, Ն. Փրիդոնեանից և Ե. Ճահնազարեանից։ Մի այլ արծաթեայ սերվիզ—օր. օր. Ա. Մանթաշեանից և Մ. Խաչատրեանից։ Մի մեծ շքեղ արծաթեայ գաւաթ—օր. օր. Մ. Ա. և Հ. Ռոտինեաններից։

* * *

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ «Նովոյէ Աբազր.» լրագրին հաղորդում են, որ այնտեղի հայոց եկեղեցում հոգեհանգիստ է կատարուել Գ. Արծրունու համար, ուր ուսանող Ս. Ճախ-Նազարովը դէպքին պատշաճ ճառ է արտասանել ռուսերէն լեզուով։

* * *

ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԷՋ

Եւրոպական լրագիրների մէջ երբեմն մեծամեծ գովեստներ կը շռայլեն երկաթուղիների հաստատման առիթով Թիւրքայի մէջ և հետևապէս մեծամեծ յոյսեր կը տածեն երկրին արդիւնաբերական և տնտեսական զարգացմանը համար։ Տարակոյս չկայ թէ երկաթուղիները զանազան տեղերի հետ հաղորդակցութիւնները և փոխադրութիւնները դիւրացունելով և արագացունելով, ապրանքների փոխադրութեան և առևտրական շարժման մեծ զարկ կրնան տալ։ Բայց պէտք է նկատի առնել նաև թէ այդ երկաթուղիներ ինչ պայմանների մէջ կը գտնուին և ինչ գներով ապրանք և մարդ կը փոխադրեն, որովհետև այդ պայմաններէ և գներէ կախում ունին երկրին զարգացմանը իրենց տալիք դիւրութիւնները։ Հետևեալ իրողութիւնը կրնայ մի գաղափար կազմել տալ այդ մասին։

Թողունք մի կողմ այն ցաւալի իրողութիւնը, որ այսօր հրդրում, Վան, Մուշ և այլն, ուր հնդախտն որոշ կերպով իւր հետ երևան հանած է և սովի նշաններ, հաղորդակցութեան դժուարութիւնների պատճառով չեն կարող ցորեն ստանալ մօտակայ հացաշատ երկիրներէն. նոյն իսկ Կ. Պոլիս, որ երկաթուղիներով կապուած է այժմ Փոքր-Ասիայի ներքին և առատ ցորեն ունեցող մի քանի գաւառների հետ, ստիպուած է Ռուսիայէ և Հունգարիայէ ալիւր բերել տալ, որովհետև այդ աւելի աժան կը լինի Կ. Պոլսի համար, քան թէ, օրինակ, Էնկիւրիէն շոգեկառքով ցորեն Կ. Պոլիս բերելը։ Անատոլուի երկաթուղիների ընկերութիւնը ոչ միայն չաժանցուց փոխադրութեան գները, այլ առաջուընէ աւելի թանկացուցած է. Ընկերութիւնը Էնկիւրիէն մինչև Նիկոմիդիա (Իզմիտ) ապրանք փոխադրելու համար ամէն մէկ օխաէ 18էն 20 փարա (9 սանթիմ—10 սանթիմ) կը պահանջէ մինչդեռ նոյն ապրանքներ 13 ($6^1/_2$ սանթիմ) և առառաւելն 15 փարայով ($7^1/_2$ սանթիմ) կը փոխադրուէին առաջ ուղտերի միջոցով։ Երկաթուղիների ընկերութիւնը 1 քիլէ ցորեն փոխադրելու համար 10 ղրուշ (2 Ֆրանք) կը պահանջէ, մինչդեռ մէկ քիլէ ցորենի գինն է արդէն Էնկիւրիի մէջ 11 ղրուշ (2 ֆրանք և 20 սանթիմ)։ Այսպիսի պայմանների մէջ ինչ օգուտ ունի Կ. Պոլսի համար Էնկիւրիի մէջ ցորենի առատ լինելը և հայտար փաշա-Էնկիւրիի երկաթուղիների հաստատումը։ Երկաթուղու ընկերութիւնը Էնկիւրիէն Նիկոմիդիա մէկ կով փոխադրելու համար 324 ղրուշ (65 ֆրանք) կառնէ և մէկ ոչխարի համար 48 ղրուշ (9 ֆրանք և 60 սանթիմ)։

Թիւրք կառավարութիւնը պէտք էր օրինակ առնէր գոնէ իր վեհապետութեան տակ գտնուած փոքրիկ Պուլկարիաէն, որ իր երկրի մէջ հողագործութեան արդիւնաբերութեանը նպաստելու համար երկաթուղիներ հաստատելէ զատ, ամեն ջանքեր կընէ անոնց փոխադրութեան գները աժանցունելու համար։

—

«Արևելք» լրագիրը մի շաբաթ դադարելէ յետոյ վերստին հրատարակութեան արտօնութիւն ստացած է։

—

Արժ. Յովսէփ. Ծ. Վ. Այվազեան պատրիարքական Փոխանորդի պաշտօնով կը զրկուի Պանտրմա, ուր, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, մի մաս լուսաւորչական հայերէն դիմած են հռովմէական եկեղեցու գիրկը, Տ. Ոսկի քահանայի առաջնորդութեամբ։

—

Արաբկերի նորընտիր Առաջնորդ Գեր. Վահան Ծ. Վ. Յակոբեանի ընտրութիւնն վաւերացուցած լինելով Ազգային Կեդրոնական Վարչութենէն և Արաբկերէն ալ հեռագրով իմաց տրուած լինելով, որ ճանապարհածախքը զրկեր են Պատրիարքարան, կը յուսացուի թէ Նորին Գերապատուութիւնը շուտով ճանբայ կելնէ Կ. Պոլսէն ինչպէս կը խնդրեն Արաբկերցիները։

—

Նշան անուն մի հայ մի տեսակ թրքական ծխափայտ հնարեր է պըտուտակով, որով ծխափայտի մէջէն դուրս կըձգուի ծխախոտին գոյացուցած աղտը։ Հանրօգուտ շինութիւնների նախարարութիւնը հնարչի արտօնագիր տուեր է իրեն, որով մինչև 10 տարի իրմէ զատ ոչ ոք իրաւունք պիտի ունենայ այդ

նոր տեսակ ծխափայտէ շինելու և շահուելու:

***

Ներքին գործոց նախարարութիւնը, «Տագանր. Վեստն.» լրագրի ասելով, մի քանի մարդ է ուղարկել Հիւսիսային Կովկաս 6 միլիօն պուդ ցորեն գնելու և հասցնելու Ռուսաստանի ներքին նահանգները, որոնք 1892-ին ենթարկուել են սովի:

***

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են.

«Ամսոյս 20-ին, Ղզլարի հայ հասարակութիւնը հոգեհանգիստ կատարեց, պատարագից յետ, Սրբազան եպիսկոպոսաց՝ Ստեփաննոս Մխիթարեանի, Խորէն Նար-Բէյ Լուսինեանի ու Գարեգին Սրուանձտեանի և «Մշակի խմբագիր Գրիգոր Արծրունու համար: Ուսուցիչ՝ տեղւոյս եկեղեցական Ծխական դպրոցաց պ. Թառումեանցը կարդաց մի գեղեցիկ ճառ, բացատրելով հասարակութեան այդ մարդկանց կորստեան մեծ նշանակութիւնը ազգի համար:

—Ամսոյս 29-ին դերասան Յովսէփ Կարանեանցը տեղւոյս սիրողների մասնակցութեամբ ներկայացրեց «Արշակ Բ» ողբերգութիւնը (5 գործ.). պ. Յ. Կարանեանցը Արշակի դերում 2-րդ գործողութեան մէջ շատ լաւ էր:

Սիրողներից շատ գոհացուցիչ և լաւ խաղացին պ. Մ. Բուրժալեանը, պ. Գ. Թառումեանցը, Ն. Կաճկաճեանը: Թատրոնի դահլիճը լի էր ժողովրդով:

***

Նիժ: Նուխուայ գաւառի հարաւարևելեան մասում գտնվում է Նիժ գիւղը, ուր բնակվում են 700 տուն հայ-ուտիացի և 60 տուն մահմեդական: Ուտիացիք կան նաև այս գաւառի Վարդաշէն գիւղում, բայց զանազանվում են առաջիններից իրանց բարքով ու սովորութիւններով: Նիժեցի ուտիացոց աշխատասիրութեան և տոկունութեան շնորհիւ նոցա տնտեսական դրութիւնը մինչև վերջին ժամանակը շատ բարգաւաճեալ էր: Նոցա այգիներն իրանց մեծութեամբ առաջին տեղն են բռնում գաւառում. կանայք պարապում են մետաքսագործութեամբ, որ այնքան զարգացած է նոցա մէջ որ ամբողջ գաւառի արտադրած կոկոնների քանակութեան կէսը նոցա ձեռքի գործն է: Բացի այս նիժեցիք արտահանում են ծախելու համար ընկոյզ, ցորեն, բրինձ և այլն տարեկան մօտ 100,000 ռուբլու: Այս գիւղը իւր այգիներով 8 վերստ երկարութիւն և 2—3 վերստ լայնութիւն ունեցող տեղ է բռնում: Չնայելով որ Նիժը ճանապարհին տափարակի վրայ է գտնվում, բնակիչները շատ ամուր կազմուածք ունին և ազգաբնակութեան աճումն աւելի արագ է կատարվում քան դրացի գիւղերում: Ինչպէս երևում է 1873-ի ազգահամարից, այն ժամանակ Նիժ գիւղը 545 տուն ունէր իսկ 1886-ի հաշիւը ցոյց է տուել որ այդ տարի Նիժում 760 տուն է եղել կամ 6000 հոգի: Հայ ուտիացոց մէջ շատ գերդաստաններ կան, որոնք 20—30 հոգուց են բաղկացած: Նոքա սիրում են մի գերդաստանի մէջ ապրել և գլխաւորապէս միմեանց հետ են ազգակցական կապեր կապում, որքան այդ ի հարկէ թոյլ են տալիս եկեղեցական օրէնքները:

Սակայն վերջին ժամանակներս, ինչպէս հաղորդում է «Կասպի» լրագրի թղթակիցը, նոցա բարեկեցութեանը վտանգ է սպառնում, գերդաստանների $^2/_3$ մասը պարտքի տակ է ընկել, պարտատէրերը դրացի Բում գիւղի վաշխառուներն են. իւրաքանչիւր գերդաստանի պարտքը յաճախ 2000 ռուբլու է հասնում: Այս պարտքը նոքա արել են որպէս զի նոր տներ կառուցանեն կրամիտով ծածկուած փոխանակ յարդեայ տանիքների, որ կրակ էին գցում:

Հրդեհի դէմ ապահովութեան և գեղեցկութեան տեսակէտից այդ շինութիւնները շահուեցան, բայց դժբաղդաբար հատուցանելիք աճողին տոկոսիքների պատճառով բնակիչների մեծագոյն մասն անելանելի դրամական դրութեան մէջ է ընկել: Ցաւալի է տեսնել ինչպէս հետզհետէ ընկնում է այնքան բարգաւաճ տնտեսական վիճակը... Վաշխառուների ճիրաններից նիժեցոց կարող էր ազատել միմիայն աժանագին վարկը, որ կարող էր սահմանել տէրութիւնը գիւղական բանկ հիմնելով:

***

Հինշաբթի, յունուարի 7-ին, հայ դերասանական մշտական խումբը կը ներկայացնէ առաջին անգամ Թիֆլիզում «Երուանդ Բ.» պատմական դրաման. կը մասնակցեն. բացի ամբողջ խմբից, նաև կողմնակի անձինք, թւով աւելի քան հարիւր հոգի: Վարչութիւնը, ինչպէս հաղորդում են մեզ, ոչ մի ծախք չէ խնայել ներկայացումը շքեղ անելու համար:

***

Վիեննէրի վառօդի պահեստներից մէկում, ուր յունվարի 1-ին պայթուն է եղել, ինչպէս տեղեկանում ենք ամենաճիշտ աղբիւրներից, ընդամենը 160 պուդ վառօդ է եղել 1650 ռուբլու արժողութեամբ. ոչնչացրած պահեստի կառուցումը նստել է Վիեննէրին 1200 ռուբլի:

***

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ և ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

(Քաղուածք 1893 թ. «Կովկաս. կալէնդարից»)

Վիճակագրական այն փոքրիկ տեղեկութիւնը, որ տուել էինք մենք «Արձագանքի» նախընթաց համարում Երեւանի նահանգի ժողովրդական լուսաւորութեան վերաբերութեամբ, այնքան հետաքրքրել է մեր ընթերցողներին, որ մենք շատերի ցանկութիւնը կատարելու համար ամբողջացնում ենք Կովկասեան բոլոր նահանգների մասին յայտնի պաշտօնական տեղեկութիւնները ժողովրդական լուսաւորութեան վերաբերութեամբ:

1) Թիֆլիզի նահանգ.

1890 թուական.

Բոլոր ուսումնարան. թիւն էր	228
Ուսանողների թիւն է . . .	21,753
Մի ուսումնարան է հասնում	3,660 մ.
Մի ուսանող ընկնում է . .	38 մ.
Աղջիկ ուսանողների թիւը յաբերում է տղայոց . .	1:2,2

Այս նահանգում կայ հայկական մի թեմական դպրանոց և 36 ծխական ուսումնարան:

Այս թուականին ուսանողների թիւն ԸՍՏ ԱԶԳՈՒԹԵԱՆՑ էր.

Ռուս	4,024	կամ	18,4%
Վրացի	7,048	»	32,3%
ՀԱՅ	7,828	»	35,9%
Թուրք	320	»	1,5%
Լեհացիք	306	»	1,4%
Հրեայք	268	»	1,2%

ԸՍՏ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ.

Ուղղափառ . . .	11,171	կամ	51,3%
Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատացեալ.	7,267	»	33,4%
Կաթոլիկ	1,158	»	5,3%
Բողոքական . . .	1,261	»	5,7%
Մահմէդական. . .	339	»	1,5%
Հրեայ	268	»	1,2%
Այլ և այլ դաւակ.	289	»	1,3%

ԸՍՏ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ.

Ազնուականներ . . .	4,564	կամ	20,9%
Հոգևորականներ . .	1,534	»	7,%
Քաղաքացիք	5,782	»	266%
Գիւղացիք	9,602	»	44,1%

Իւրաքանչիւր 5,7 ազն. մէկն է ուսում.
» 3,9 հոգևորականից մէկը.
» 24,3 քաղաքացուց մէկը
» 77,1 գիւղացուց մէկը.

Դպրոցների վրայ ծախքը.

Տէրութեան գանձարանը վճարել է	996,763 ռ. 19 կ.
Եկեղեցիք ու վանքերը	160,270 »
Ուսման վարձ առնուել է	126,934 ռ.
Քաղաքներն ու գիւղերը վճարել են	58,236 ռ.
Ծախսուել է ընդամենը	1,439,463 ռ. 12 կ.

2. Գանձակի նահանգ.

1890 թ.

Բոլոր ուսումնարանների թիւն էր	—516
« ուսանողների	8,917.
Հայ եկեղ. ծխ. դպրոցներն էին	— 27.
Դպրոցներում ուսանում էին	1,731 աշ.
Մահմեդական դպրոցներ . . .	433
աշակերտ	4,311.

Լուսաւորութեան գործը դանդաղ է յառաջ գնում, 1880—1890 թուականը դպրոցների թիւը երեք անգամ շատացել է, իսկ ուսանողների թիւը երկու անգամ: Տէրութեան վարժատների թիւն է—56. Սրանց մէջ ուսանում են—3,875 աշակ.

Քութայիսի նահանգ.

1890 թ.

Բոլոր դպրոցների թիւն է . . .	638
— ուսանողների — . . .	28,785
Տէրութեան վարժատների թիւն է.	147

Մնացեալ դպրոցները զանազան դաւանութեանց պատկանող ծխական դպրոցներ են:

Յունական դաւանութեան են. .	232
Մահմետական մէդրէսէք	258
Հայկական	7
Քրիստոնէութիւն տարածող ընկերութեան	3

Այս նահանգի դպրոցներից $^4/_5$ կազմում են զանազան դաւանութեանց դպրոցները:

Քութայիսի գիմնազիոնում ուսանում են

Ռուս	140
Իմերել, գուրիացի, մինգրել . . .	268
Հայ	41
Հրեայ	13
Թուրք	22
ընդամենը	448

Պրոգիմնազիայում ուսանում են

Ռուս.	16
Իմերել, գուրիացի, մինգրել . . .	145
Հայ.	12
Հրեայ.	1
	175

Վրաց ազնուականների դպրոցը պօրգիմնազիոնի դասընթացով ունի 390 վրացի աշակերտ, ծախսում է տարեկան 26,710 ռուբլի: Այս դպրոցը 12 տարի է որ գոյութիւն ունի և ցարդ չէ պատահել, որ այս տեղից որևէ աշակերտ մտնէ տէրութեան բարձր դպրոցները: Այս նահանգում 1,000 մարդուց 57,5 գրաճանաչ են, որոնցից 35,7 ազնուական և 21,8 հարկատու դասակարգից:

Թիֆլիզի նահանգից յետոյ Քութայիսի նահանգը երկրորդ տեղն է բռնում Անդրկովկասում դպրոցների և ուսանողների թուին նայելով:

Բագուայ նահանգի և Ղարսի շրջանի մասին լռում է վիճակագրութիւնը, իսկ Դաղստանի մասին եղած տեղեկութիւններից իմանում ենք, որ կրթութեան գործը դեռ նոր է սկսւում այնտեղ. տէրութեան վարժարաններում 580,000 տեղացի բնակիչների որդկանցից միայն 174 հոգի են ուսանում, որ կազմում 0,03%:

Զանազոն տեսակի պետական վարժատներում հայ ուսանողների թիւն ու տոկոսը հետևեալն է.

Գիմնազիոններում . . .	690—21,0%
Պրոգիմնազիոններում . .	197—31,8%
Ընդամենը	887—22,7%
Ռէալական դպրոցներում	584—25,4%
Օրիորդական գիմնազիոններում և պրոգիմ.	835—18,4%
Վարժապետանոցներում .	6
Վարժոցներում . . .	53—19,2%
Քաղաքային դպրոցներում	2022—30,2%
Հանքաբանական դպրոցներում	27— 4,4%
Արհեստագիտական դպրոցն.	177—29,9%
Ծովագնացների դպրոցում	4.

Այս վիճակագրական տեղեկութիւններից ակնյայտնի երևում է, որ կրթութեան և լուսաւորութեան գործում հայերը՝ տիրապետող ազգից յետոյ առաջին տեղն են բռնում Կովկասում:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Պ. Ն. Ադոնցն ուղղել է մեզ հետևեալ նկատողութիւնը.

«Պ. Խ. Յովհաննիսեանի «Միլլեթի հետազօտութիւնները» յօդուածում, որ զետեղուած էր «Արձագանքի» վերջին համարներից մէկում, ասուած է, 'ի միջի այլոց, որ «գերեզման» բառի ստուգաբանութիւնն անվերծանելի է մնում մինչև այժմ: Աւելորդ չենք համարում յառաջ բերել մի կարծիք այս մասին, որ պատկանում է Շուշուայ թեմական դպրոցի ուսուցիչ պ. Մ. Գիւլզատեանին: Արգոյ պարոնի կարծիքով «գերեզման» բառը կազմուած է հետևեալ երեք բառից. գահ—նշանակում է բարձր տեղ, օրինակ՝ գահավիժել. րեզ կամ րոյչ, որ պահպանուել է հայոց լեզուում նաև «ապարէզ» բառի մէջ, համազօր է «արձակել», «ձգել» բայերին. (ապարէզ—ձիարձակ). այս բառի հայկական տառադարձութիւնն է իսկապէս «լոյծ-լուծանել=քանդել, արձակել. իսկ վերջին լծորդը «ման» =մարդ, ման-ուկ: Այսպիսով գերեզման կամ գահրեզման նշանակում է բարձրից ձգել մարդուն, կամ տեղ, ուր ձգում են բարձրից մարդուն: Այս բացատրութիւնը պարոնը հաստատում է և մի արիական սովորութեամբ, որով մեռելներին աշտարակներից ձգում էին ցած, փոսի մէջ...

Յարգելի ուսուցիչը շատ հմուտ է հայոց, պարսից և արաբական լեզուներին, այլ և քաջ ծանօթ է նոցա պատմութեան, հին աւանդութիւններին, սովորութիւններին, Նայիրի միջնադարեան ժողովրդական բանաստեղծութեան—մի հանգամանք, որ այնքան կարևոր է մեր հին մատենագրութեան ուսումնասիրութեան համար: Այս է պատճառը, որ պ. Գիւլզատեանը երբեմն շատ հետաքրքիր և հաւանական վերծանութիւններ է առաջարկում մեր հին անգիր բանահիւսութիւնից մնացած այն կտորներին, որոնք Խորենացու պատմութեան միջոցով հասել են մեզ: Սակայն զարմանալին այն է, որ լրագիրներում խօսք է բացւում այդ մասին մինչ այն աստիճան, որ ուրիշները ստիպուած են լինում յայտարար լինել նորա կարծիքներին այս կամ այն ձևով:

Հին ժամանակներից սկսած գիտնականներն աշխատում էին աստղաբաշխութեան օրէնքներով մեկնել Բէթղեհէմի աստղի երևիլը:

Կեպլերն առաջինը ենթադրութիւն արեց թէ երեք մոգերի տեսած աստղը կարելի է բացատրել Հայկ և Երևակ մոլորակների միաւորութեամբը և մինչև անգամ փորձեց հաշուել թէ երբ են տեղի ունեցել այդպիսի միաւորումներ: Վերջին տարիներս էլ քանիցս քննութեան առարկայ է այդ խնդիրը, բայց ոչ մի էական եզրակացութեան չեն հասել գիտնականները: Այժմ Ստոկուէլ անգլիացին անցեալ փետրուարի գեղեցիկ լերկնային երևոյթի առթիւ, որ առաջացել էր Աստղիկ և Հայկի միաւորութիւնից, շօշափում է նոյն խնդիրը և գալիս է այն եզրակացութեանը, որ Մատթէոս աւետարանչի հաղորդած աստղի երևիլը միանգամայն բաւարար կերպով կարող է բացատրուել Հայկ և Աստղիկ մոլորակների միաւորութեամբ: Ստոկուէլն ստուգել է, որ այդ երկու աստղը շատ մօտ են եղել միմեանց 6 թ. մայիսի 8-ին Ք. Ծ. առաջ: Այս թիւը (Հերովդէսի մահից 50 օր առաջ), ըստ Ստոկուէլի, համապատասխան է Ս. Գրքի պատմութեանը:

Դեկտեմբերի 22-ին Պետերբուրգում բացուել է «Արուեստներին հովանաւորելու Կայսերական Ընկերութեան» դպրոցի ուսանողների աշխատութեանց ցուցահանդէսը: Այս ցուցահանդէսին ի միջի այլոց արծաթեայ մեդալ է ստացել իւր նըկարած մի պատկերի համար ուսանող պ. Տէր-Յովակիմեանը:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

1, Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը,. Կ. Կոստանեանց. Թիֆլիս 1892.

2, Նոր ժողովածու. Ա. պրակ. Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ: Առաջին անգամ հրատարակեց Կարապետ Կոստանեանց. Թիֆլիս. 1892.

3, Նոր ժողովածու. Բ. պրակ. Միջնադարեան հայոց տաղեր և ոտանաւորներ: Բաղդատութեամբ հրատարակեց Կարապետ Կոստանեանց. Թիֆլիս 1892.

(Շարունակութիւն եւ վերջ *):

Անցնելով Յովհաննէս Թլկուրանցուն և իւր տաղերին՝ նախ և առաջ

*) Տես «Արձագանք» № 2.

ՖԵԼԻԵՏՕՆ

ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐԻ ՄԵՆԱՍՏԱՆԸ

(Ծննդեան զրոյց)

Ժակ Նորմանի

Պ. դը Մալօնէն՝ թխադէմ, սպիտակած մազերով, կոպիտ մարմնով ու սրտով անխոնջ որսորդ, որ ոչ Աստուծոյ էր հաւատում և ոչ սատանայի, Նորմանդական երկրի արհաւիրքն էր: Բացի իւր ձիաներին ու շներից նա միայն մի բան էր սիրում աշխարհիս երեսին—այն իւր դուստրն էր, գեղեցիկ Ժըննևիէը. բայց սիրում էր նորան մի եսական և սարսափելի խանդոտ քնքշութեամբ:

Նա գունատուում էր կատաղութիւնից և երկաթէ ձեռնոցների մէջ սեղմուում էին նորա կոշտ բռունցքները, երբ մտածում էր, որ մի օր իւր դուստրը ուրիշին պիտի գերադասէ նորանից. . .

Ո՛չ, ոչ երբէք. քանի նա կենդանի է, Ժըննևիէը մարդու չի գնալ: Միայն նորանն են այս ոսկեթել մազերը, այս խոշոր կապուտակ աչքերը, նազուք իրանը, մեղրի պէս քաղցր ժպիտը, այն թարմ համբոյրները, որ անուշ ցօղի պէս թափուում էին նորա ճակատին, երբ որ վերադառնում էր որ և է ձիարշաւից. . .

Մանուկը փայփայում, գգուում էր ծերունուն, չնայելով նորա կոշտութեանը:

Անշուշտ Ժըննևիէը տանջուում էր այն ձանձրալի կեանքից, որին դատապարտուած էր. բայց նա աշխատում էր մոռանալ որ իւր հայրն իրան լաւ չէր սիրում, որպէս զի միայն այն միտը պահէր որ սիրում էր:

Եւ սակայն նա իրաւունք ունէր ցանկանալու, որ հայրն իրան աւելի լաւ սիրով սիրէր, որովհետև խղճուկը վաղուց արդէն իւր սիրտը տուել էր Բօդուէն անունով մի ասպետի:

Թէ՛ քնած և թէ արթուն ժամանակը, թէ երազում և թէ իրօք, Ժըննևիէը միշտ ցանկանում էր տեսնել նորան, իւր սիրեցեալին, ուժեղ և շնորհալի, թիկունքը լայն, դէմքը գունատ, հայեացքը բաց ինչպէս սրի փայլը: Եւ մի և նոյն ժամանակ որչափ բարի էր նա, որչափ քնքուշ:

Թէպէտ նա եղած էր սուրբ երկրումը որպէս անհաւատների դէմ պատերազմող. թէպէտ նորան ամբողջ գաւառում ամենահմուտ նիզակ ու սուր բանեցնող էին համարում, բայց զրոյց անելիս նա կանացի գրաւիչ քաղցրութիւն ունէր և հրապուրիչ էր, երբ խօսում էր սիրոյ վըրայ:

Ժըննևիէն էլ՝ բարոնի դրած արգելքի հակառակ, չէր կարողացել հրաժարուել այդ քաղցր երաժշտութիւնը լսելուց: Յաճախակի, երբ պարոն Մալօնէն բացակայում էր տանից գայլի, եղջերուի կամ վարազի որսի համար, մատաղահաս աղջիկն ընդունում էր ծածուկ իւր սիրելի Բօդուէնին:

Ո՛հ, ինչ արագ էին անցնում այդ տեսակցութիւնների գեղեցիկ ժամերը: Ո՛հ, ինչ գեղեցիկ երդումներ էին փոխանակում. հրաշալի երազներ, որոնց մէջ զբօսնում էին սիրտ սրտի, ձեռք ձեռքի տուած, ինչպէս մի կախարդական պարտիզում, վշտերից ու տառանքներից պատսպարուած... Նոքա մոռանում էին որ իրանց սէրն արգելուած է, մոռանում էին ծեր բարոնի չարութիւնը, նորա յամառ մերժումները, այն սոսկալի սպառնալիքները, որ անդադար կարդում էր Բօդուէնի դէմ. . .

Այո՛, այս ամէնը ջնջուում, անհետանում, կորչում էր. Նոքա իրանց մի բարձր երջանկութեամբ բաղդաւորուած էին համարում, միմեանց հետ միացած՝ կեանքի համար և, եթէ հարկաւոր լինէր, նոյն իսկ մահուան:

—

Ծննդեան օրն է: Իբրև կատարեալ անհաւատ՝ անտարբեր լինելով եկեղեցու օրէնքների վերաբերութեամբ, պ. դը Մալօնէն դեռ արշալոյսից առաջ գնացել է որսի: Թանձր ձիւնը ծածկել է գետինը, բայց արևը փայլում է յստակ երկնքում:

Սքանչելի տեսարան է երևում դը Մալօնէի տանից, որի ատամնաւոր պարիսպները, բարձրուղեշ կտուրները, սրբատաշ աշտարակները, Նուրբ քարաշէն բրգերը ծածկուած են ասես շաքարի փոշիով. իսկ ցածումը ցրտից իրար մօտ սեղմուած հաւերի նման երևում են գիւղի տներն ու խրճիթները, որոնցից ծուխ է բարձրանում բարակ թելերի նըման:

Վերևը, ամրոցից էլ բարձր ու նորա հանդէպ, մի զառիվայր ժայռի վրայ, սպիտակ ձիւնի մէջ սևին տալով՝ գանգնած է զանգահարութիւնից դղրդացող մատուռը, որ մատչելի է միմիայն մի նեղ արահետի շնորհիւ: Առաւօտեան ժամի հրաւէրը լսելով բնակիչները, մարդ և կին, դուրս են գալիս իրանց բնակարաններից, ձեռները տրորելով ու ոտները գետնին խփելով՝ ցրտի խստութիւնից:

Նոքա խումբ-խումբ հաւաքուում են մեծ հրապարակումը և ժամ գնալուց առաջ զրոյց են ջանում իրար հետ: Մի կողմում սառուցի վրայ պաղի են տալիս տղայքը միմեանց բոթբոթելով ու խփելով:

Բայց ահա ամէնքը միանգամից դադարում են գնալուց, խօսելուց ու սպաղի տալուց: Ամրոցի ստորերկրեայ անցքի դուռը բացուում է և դուրս է գալիս Ժըննևիէը երկու աղախնի ուղեկցութեամբ:

Նայում են, ողջունում են:

Ի՛նչ փայլըլակայծ է ու չքնաղ մատաղահաս օրիորդը իւր թաւշեայ երկար վերարկուովը, սիրուն գտակը գլխին, ձեռները ցրտից մորթէ ձեռնապանակի մէջ պահած, որի միջից երևում է նորա աղօթագրքի կարմիր ծայրը: Նա գնում է թեթևաքայլ, և նորա փոքրիկ ոտները հազիւ են հետք թողնում ձիւնի վրայ. Նա գնում է մէկին մի ժպիտ ուղարկելով, միւսին մի քաղցր խօսք ասելով, և զգում է որ իրան սիրում են, հիանում են, որ ինքը երջանիկ է... այո՛, երջանիկ. որովհետև մի փոքր իրանից հեռու՝ վասալների բազմութեան մէջ կորած, նկատել է Բօդուէնին: Երիտասարդը անդադար Մալօնէի տան շուրջը թափառելով՝ այս առաւօտ տեսել էր բարոնին որսի գնալիս. Նա օգտուել է դէպքից Ժըննևիէի մօտ գալու համար և այնտեղ սրտատրոփ սպասում է որ մի հայեացք իրան թոյլ տայ մօտենալ...

Եւ իրան սպասել չէ տալիս այդ հայեացքը այնպիսի յստակ սիրով վառուած, այնպէս կախարդիչ: Ինչի՞ց կարող է վախենալ Ժըննևիէը... Հայրը հեռու է, երեկոյից առաջ չի վերադառնալ. Նորա շուրջը կանգնած են միայն հաւատարիմ վասալները, որոնք ամէն բանից շատ ցանկանում են նորա ամուսնութիւնը Բօդուէնի հետ. . . Եւ բացի դորանից նա սիրում է նորան, տեսնում է իւր առաջ, իրան մօտ...

Ի՞նչ խոհեմութիւն կարող է արգելել որ իւր սիրտը թռչի դէպի նա:

Մի ոստիւնով երիտասարդը հասաւ նորան, չոքեց նորա առաջ՝ ողջունելով: Օրիորդը մի ձեռով կանգնացրեց նորան և կամացուկ ասաց.

—Կը հաճէ՞ք արդեօք, պարոն, ինձ տալ ձեր ձեռքը մատուռը գնալու համար: Այս ձիւնովը բարձրանալը դժուարին է և դորանով դուք մեծապէս կը պարտաւորէք ինձ:

Մեծապէս կը պարտաւորէ՜մ. . . Բօդուէնը ժպտում է ինքն իրան. . . Մեծ բերկրութի՜ւն, անսահման բերկրութի՜ւն կը լինի ինձ համար,—այս է կամենում ասել խորամանկը, և այդ լա՛ւ գիտէ ինքը: Եւ ահա նա ուրախութիւնից դողալով յենուում է ասպետի ձեռին: Հրապարակն անցնելով նոքա գնում են դէպի ժայռի ստորոտումն եղող արահետը:

Ցիրաւի վերելքը երկար է և դժուարին, ինչպէս ասաց Ժըննևիէը. բայց դորանից կը գանգատի՞ն արդեօք երկու սիրահարները... Չէ՞ն կարող արդեօք նոքա, ընդհակառակը, այդպէս կողք-կողքի բարձրանալ դէպի վեր ու վեր, մինչև երկինքը:

—

Յանկարծ նոքա կանգ են առնում սարսափած. անսպասելի կերպով հրապարակումն երևեցաւ դը-Մալօնէն իւր ծառաներովն ու շներովը շրջապատուած և ահա իւր շնչասպառ ձիու վրայ կանգնած է նա երիտասարդ զոյգի առաջ:

Որսը յաջող է եղել և սովորականից շուտ է վերջացել: Չորս հոգի խաչմերուկ բռնած ձողերի վրայ բերում են մի ահագին գայլ, որ կուշ է գալիս, բոլորովին ցեխոտուած, թաթերը թաց, աչքերը պաղած, լեզուն ուռած. . . Եւ այս որընթաց արշաւանքիցն ու յաղթանակի ուրախութիւնից ոգևորուած որսորդների

ակամայ կանգ պիտի առնենք նորա անձնաւորութեան վրայ: Ո՞վ էր Թլկուրանցին, որ շարունակ իրան «խեւ» է անուանում իւր երգերի մէջ, երբ է ապրել, ո՞րքան է ապրել, ինչ է գրել:

Իբրեւ հաստատուն փաստ այսքանն է միայն յայտնի որ Յովհաննէս Թլկուրանցին Սսի կաթողիկոս է եղել 1489-ից մինչեւ 1525 թուականը Յովհաննէս Բ. անունով: Ուրեմն նա 36 տարի միայն կաթողիկոս է եղել. այնուհետեւ իւր «էՙ մահ, քանի ըզքեզ յիշեմ» երգի մէջ ինքն իրան եօթանասնամեայ ծերունի է անուանում.

Յովհաննէս Թլկուրանցի,
Ջուր կ'ասես, զայլ ու ք խրատես,
Եօթանասուն տարի լցեր,
Ի մեղաց մէջն կացեր ես:

Ուրեմն եթէ ընդունենք որ Թլկուրանցին հէնց եօթանասնամեայ կամ 71-ամեայ հասակում է մեռել 1525 թ., կը նշանակէ որ իւր կեանքի մեծագոյն մասը նա ԺԵ դարու հեղինակ է, մանաւանդ որ գոնէ պ. Կոստանեանցի հրատարակած տաղերի մեծ մասը նոր երիտասարդ հասակի արտադրութիւն է երեւում:

Այդ կողմից խիստ հետաքրքրական է Թլկուրացու թէ լեզուն և թէ բանաստեղծական արտայայտութեան ձեւերը: Բացի ժամանակը որոշելուց, երբ ապրել և գրել է իւր տաղերը Թլկուրանցին, ուրիշ ոչինչ յայտնի չէ, եթէ չյիշենք որ ինքն ըստ ընթեան հասկանալի է նորա մականունից թէ Յովհաննէսը ծնուել է Թլկուրան կամ Թուլկուրան աւանում, որ գտնւում է Հայոց Միջագետքում Տիարբէքիր կամ Ամիդ քաղաքից դէպի հարաւ *):

Խօսք չկայ որ շատ ցանկալի կըլինէր աւելի տեղեկութիւն ունենալ մի այսպիսի հետաքրքրական անձնաւորութեան կեանքի մասին. բայց քանի որ այդ տեղեկութիւնը չունինք, մեզ մնում է շատանալ Թլկուրանցուց մեզ հասած տաղերի տուած փաստերով: Իսկ այդ փաստերը բաւականաչափ որոշում են նորա բանաստեղծական կերպարանքն ու բնաւորութիւնը:

Պ. Կ. Կոստանեանցի հրատարակած ժողովածուի մէջ 16 տաղ կայ, որոնցից երեքը առաջին անգամն են լոյս տեսնում, իսկ մնացեալներն արդոյ հրատարակիչը տպագրել է զանազան հաւաքածուներից ու պարբերական հրատարակութիւններից հանելով, բայց մեծ մասամբ նոր համեմատութիւններով, որ առնուած են հրատարակչի ձեռքի տակ եղած ձեռագիր տաղարաններից:

*) Յառաջաբան պ. Կոստանեանցի, եր. 1.

Այդ տասնեւվեց երգերը երկու որոշ մասի են բաժանւում, որ Թլկուրանցու կեանքի երկու միանգամայն տարբեր շրջանի պատկերն են ներկայացնում:

Առաջին խմբի հեղինակը մի խանդավառ երիտասարդ է, որ բանաստեղծական ոգեւորութեամբ ու աւիւնով երգում է կեանքի ամէն տեսակ վայելքները: Պարզ է որ երգիչը ճաշակել է կեանքի քաղցրութիւնները. այն հեշտասիրական յափշտակութիւնը, որ երեւում է նորա այդ խմբի երգերից իւրաքանչիւրի մէջ, այն վառվռուն գոյները, որով նկարագրում է նա կանացի հրապոյրները, այն զգայական աշխոյժը, որով ներշնչուած են նորա սիրոյ նուագները, —այս բոլորը, ասում ենք, ապացոյց է որ Թլկուրանցին երգում է իւր իսկ զգացածն ու վայելածը: Եթէ այդպէս չլինէր, հազիւ թէ մեր առաջ դրած երգերն ունենային այն կենդանութիւնն ու անկեղծութեան դրոշմը, որ Թլկուրանցու երգերի յատկանիշն է: Այսպիսի եռանդուն ոգեւորութեամբ գրուած տաղերի ընդհանուր նիւթն է սէրն ու կանացի գեղեցկութիւնը, գինին ու բնութեան հրաշալիքները, որ ստորեւ կը տեսնենք 'ի մօտոյ:

Թլկուրանցու երգերի երկրորդ խումբը արդէն հասակն առած մարդու և թերեւս կրօնաւորի յատուկ զղջման ու ապաշխարանքի պտուղ է:

Հեղինակը ցոյց է տալիս իւր երիտասարդութեան ժամանակ երգած վայելքների - սիրոյ, կնոջ ու գինու— ունայնութիւնը և նոյն իսկ յանցաւոր լինելը. այդ բոլորը հոգու փրկութեանը նպաստելուց շատ հեռու բաներ են, և Թլկուրանցին վախենում է մի գուցէ իւր մեղքերի համար «գեհենի բաժին» լինի:

Գեղարուեստական արժանաւորութեան տեսակէտից այդ խմբի երգերը բնականաբար աւելի թոյլ են առաջինների համեմատութեամբ, որովհետեւ երկրորդ խմբի մէջ խրատական տարրը գերակշռող է, ուստի և բանաստեղծական զգացմունքի անմիջական արտացայտութեան աշխոյժն ու ոգեւորութիւնը խիստ աղօտ է: Վերջին հանգամանքը միանգամայն հասկանալի կըլինի, եթէ բացի հեղինակի հասակից (որ կարող է և երկրորդական նշանակութիւն ունենալ) աչքի առաջ ունենանք և այն, որ Թլկուրանցին այդտեղ ոչ միայն իւր զղջումն է յառաջ բերում, այլ և պատանիներին առ հասարակ խրատել և մեղքից զգուշացնել է կամենում. իւր երկրորդ կարգի տաղերի այս նշանակութեանը նա կարծես աւելի կարեւորութիւն է տալիս: Եւ այսպէս քանի որ այդ երգերն աւելի դատողութեան, խոհական մարդու մտքի արտադրութիւն են, քան անմիջական վառ զգացմունքի, ապա ուրեմն նոցա ընդհանուր բնաւորութիւնն էլ տարբեր է առաջին խմբի խանդավառ նուագներից:

Թլկուրանցու երգերի այս երկու հակադիր շրջանի համեմատութիւնից պ. Կոստանեանցն իրաւամբ հետեւեալ եզրակացութիւնն է անում.

«... Երեւում է, որ Թլկուրանցու երիտասարդութիւնը բնաւ այն համեստ ու սահմանափակ բնաւորութիւնը չէ ունեցել, որ յատուկ էր նորա եկեղեցական կոչմանը. 'ի հարկէ այդպիսի մերձաւոր ծանօթութիւնը գեղեցիկ սեռին կարող էր լինել հետեւանք նորա ընտանեկան կեանքին աշխարհական կոչման մէջ և հաւանական է, որ Թլկուրանցին մինչեւ իւր կաթողիկոսանալն եղել է շուշտակ կրօնաւոր»:

Ակներեւ է որ նա երիտասարդ հասակում քաջ ծանօթ է եղել գեղեցիկ սեռին և վայելել է աշխարհային հաճոյքները, բայց հարկաւ նա կարող էր և շուշտակ կրօնաւոր չըլինել:

Կամենում ենք կարծել նաեւ, որ Թլկուրանցու մեզ հասած տաղերից և ոչ մէկը գրուած չէ նորա կաթողիկոսանալուց յետոյ. «խեւ» Յովհաննէսը հէնց կրօնաւոր դառնալուց յետոյ կարող էր զղջալ իւր երիտասարդական «մեղքերի» վրայ և մտածել հոգու փրկութեան մասին: Չենք կարծում, որ կաթողիկոսական գահի վրայ բազմած նա այնպիսի համեմատաբար վառ գոյներով յիշատակէր.

Վատ աղջիկունք, կին գեղեցիկ,
Որ ծամն ու վարսն են յօրինած,
Նոքա ունին պայծառ հանդերձ,
Ձետ արեգակն են բոլորած,
Ճօճեն 'ւ օրօր առնեն կամաց,
Լինին ամէն մարդոյ սիրած,
Ի մահու օրն են ատելի եայն:
(«Ի վերայ մահուան»):

Ինչ և իցէ, Թլկուրանցին մի հետաքրքրական գրական երեւոյթ է. նորա հոգեւոր բարձր կոչումն ի նկատ առնելով մարդ առանձին ուշադրութեամբ հետեւում է նորա երիտասարդական ստեղծագործող երեւակայութեան և բուռն զգացմունքի սիրուն արտադրութիւններին:

Փոքր շարքում առաջնակարգ տեղ է բռնում կնոջ գեղեցկութիւնը, որի նկարագրութեան համար Թլկուրանցին յատուկ ձեւեր ու պատկերներ ունի, ստէպ ժողովրդական բանաստեղծութիւնից կամ ընդհանուր արեւելեան արտայայտութեան եղանակներից փոխ առած: Չմոռանանք նախապէս յիշելու որ Թլկուրանցին յաճախ նաեւ օտար բառեր ու դարձուածներ է գործ ածում, ինչպէս նմանապէս ամբողջ ոտանաւորներ է գրել թուրքերէն լեզուով:

Տեսէք ահա ինչ ձեւերով է ներկանում Թլկուրանցուն գեղեցիկ կինը.

Ծով ծով աչուեր ու լուս քնար.
Ունքն կեռ էր քան զկամար,
Ճակատդ է լուս և լուսփնար,
Բոլոր լուսին, շամս ու ղամար.
Վարսերդ ոսկի թել է քաշած,
Վերայ մարմնոյդ եկեալ հաւսար:
Երեսդ ի վառ է ծիրանի,
Վարդ, ռեհան ու նունուֆար.
Ծոցդ է բաղչայ վարդով ի լի.
Մարգրիտ ատմունքդ ի շարէ շար,
Քո ձայնդ անուշ քաղցր եղանակ
Բերնէդ ի վայր թափուի ջուհար.
Այդ քո պատկերդ է լուսեղէն,
Մարմինդ քո ճոխ բուսեր չինար,
Ու ճօշ կուտայ քան զուռ դալար...
(Տաղ Ա. *):

Այս կտորի մէջ յառաջ բերած համեմատութիւնները գրեթէ նոյնութեամբ պատահում են և միւս երգերի մէջ. կանացի մարմնի զանազան մասերը գրեթէ միշտ նոյն տպաւորութիւնն են անում երգչի վրայ, գոնէ նա շարունակ միեւնոյն գոյներն ունի գեղեցկուհու պատկերը ձեւացնելու համար.

Սպիտակ ճակատ, թուխ թուխ աչեր,
Լուլթի ու վարամով լուս երես.
Լար շրթներով վարդ կու թափես,
Ճօճան վզովդ բերդեր քակես...
Ծոցդ է գրախտ անմահութեան,
Անմահական-պտղով դրախտ. . .
(Տ. Բ.)

Դու պարնանային վարդ ու բուրաստան,
Աչերդ է ծովեր խումար ու մէստան.
Քո ծոցդ է ծաղկոց, մրգոց անդաստան...
(Տ. Ե.)

Ես զձեզ տեսայ սիրով նստած,
Արեւման արեգական.
Զինչ որ բաղչայ, որ կայ 'ի ներս,
Վարդ ու շուշան պայծառ ծաղկունք.
Աչուեր ունիք զինչ ծովերուք,
Յունքեր ունիք զինչ թուխ ամպունք.
Ծոցման կլափ ու լար շրթունք.
Ու մարգարտաշար ատամունք:
(Տ. Է.)

Այս կտորներից տեսնում ենք որ յառաջ բերած համեմատութիւնները քիչ են տարբերւում միմեանցից: Փոքր ինչ այլ եղանակով է նկարագրուած գեղեցիկ կինը հետեւեալ կտորներում.

Էՙ մեղր ու կարագ և կեղեւ նուշ...
Էՙ սեւվի չինար և սպիտակ թուշ,
Ունիս կամար ունքեր զերթ աղեղան կուշ...

Երեսդ է արև, ճակատդ է դոհրա.
Կլափդ է խնձոր, ծծերդ է շամամ,
Զինչ դրախտն է Եդեմ ամէն ծոցդ քո կան,
Երբ շաքարն է մօտս, 'ի Մըսըր ինձ ինչ կայ...

Թէ ինչ զգացմունքով է վերաբերւում երգիչը դէպի այս կանացի հրապոյրքները, երեւում է շատ կտորներից. մի քանի երգեր ամբողջապէս Թլկուրանցու սիրոյ բուռն արտայայտութիւնն են: Կնոջն այսպէս չքնաղ ներկայացնելուց յետոյ բնական է որ երգիչն ասէ.

Հաբեղանոյն ես որոգայթ,
Քահանայից ակնակուռ զարդ.
Ջմիակեցին խելքն տանիս,
Որ կացեր է զօրն անարատ:
(Տ. Բ.)

. . . . .

Հարիւր տարւոյ հաբեղանին
Որ ճերմակն է դարձեր գեղին
Կորէ զկօրտիկ պատարագին
Ու զքեզ ուզէ առջեւ խաչին:
(Տ. Դ.)

Թէ վարդապետն զձեզ տեսնու,
Մոռնայ զուսումն ու շատ գրունք.
Ամէն անձամբն 'ի դող ելնու,
Անցնի ամառն ու ձմեռնունք:
(Տ. Է.)

Ի հարկէ վարդապետն «ամէն անձամբն 'ի դող ելնու», եթէ երգիչն ասում է.

...Դուք հայէք, հանէք լերունք,
Սիրով քակէք բարձր բերդեր,
'Ի 'ի դել հանէք վէմք ու սարունք:

«Խեւ Յովհաննէս Թլկուրանցին» գովում է կանանց, չնայելով որ գրում է թէ

Վախեմ թէ հուրն այրէ զհոգիս,
Յերագ ուտեն անքուն որդունք:

Թլկուրանցու համար իւր սիրեցալի մի համբոյրը

. . . կ'ժէ զԽորասան,
Զհապաշ ու զհնէն տիլու հնդուստան.
Երկու վարսն է դին Չինի և Խութան,
Պուլղար Ստամպօլ է Ջէհրի եազդան...

Երգիչը հիւանդ եղած ժամանակը առողջանում է, երբ սիրուհին նստում է նորա կողքին. նա էլ համբերութիւն չունի. սիրուհուն տեսնելիս դողում է.

Զունչս քաղեցաւ,
Չթողիր չիս համբերութիւն.
Քանի տեսնեմ կու սարսափիմ,
Սիրտս ի փորիկս կ'անցնու կրծիցս,—
Ինձ մեղադիր չէր կուլինիք:
...Դու դեղ ես ուրախութեան.
Որ զքեզ տանին 'ի պաղչանին,
Զծամդ ու զվարսերդ ի վայր թողուս,
Ծոցդ բանաս 'ի մէջ պաղչին:
Ով զքեզ սիրէ, ո՞նց մեռանի,
Կամ երեսուն դառնայ գեղին:
Պարծանք ու վաշ քո ծնողին,
Փառք և պատիւ քո Արարչին:
Ո՞նց կարէ զքեզ գովել
Խեւ Յովհաննէս Թլկուրանցին.
Քեզ վայել է ծառայ Խըտի,
Բուլղար, Չարքազ, Հոռոմ, Լատին:

Խիստ ժողովրդական բնաւորութիւն ունի և վերին աստիճանի բանաստեղծական է Ը. երգը, որ սկսւում է այսպէս.

Աչերդ է թուխ ու պէտ.
Դու խորոտիկ ես.
Քաֆուր փարդի նման
Անուշ հոտիկ ես և այլն:

Ափսոս որ լրագրական նեղ սահմանները թոյլ չեն տալիս ամբողջապէս յառաջ բերելու այդ սիրուն տաղը, որ բաւականին երկար է: Ընթերցողին ենք թողնում կարդալու նաեւ զարնան գեղեցիկ նկարագրութիւնը (Զ. «Տաղ Գարնան») և խրատական երգերը, որոնց ընդհանուր բնաւորութիւնը համառօտ ձեւով որոշեցինք վերեւը:

Հօն:

*) Այս երգի համար իրաւամբ պ. Կոստանեանցը նկատում է. «Մեզ այնպէս է երեւում, որ այդ երգը, որ լի է կրկնութիւններով, իսկապէս 2—3 երգերից է բաղկացած»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Բերլինի լրագրների տեղեկութիւնների համաձայն գերմանական կայսեր նոր տարուայ առթիւ արտասանած ճառը շատ խիստ ըսպառնալիքներ է պարունակում այն զինուորական բարձրաստիճան անձանց վերաբերմամբ, որոնք հակառակում են նոր օրէնքի ընդունելուն: Լրագրների մեկնութեանցը նայելով կայսրն աչքի առաջ ունի 'ի միջի այլոց կոմս Վալդերզէին:

Ինչպէս յայտնի է զօրքի մէջ առանձնապէս որոշ տրամադրութիւն է նկատուում զինուորական նոր օրինագծի դէմ: Կայսրն այդ առթիւ յայտնել է իւր ճառի մէջ որ այդ ձգտումները պէտք է կարգապահութեան դէմ գործած յանցանք ճանաչել, որ ամենայն խստութեամբ կը պատժուի:

Բերլինի լրագիրները կայսեր ճառի հիման վրայ այն եզրակացութիւնն են անում որ նա ամենախիստ միջոցների դիմելու պատրաստ է զինուորական նոր օրէնքն ընդունել տալու համար:

ՖՐԱՆՍԻԱ.—Մեր ընթերցողներին արդէն գիտեն որ անիշխանականները Փարիզում մի յանձնաժողով են կազմակերպել տասն և մէկ հոգուց, որ պիտի գործէ հասարակապետութեան դէմ յեղափոխական միջոցներով:

Temps լրագիրը կիսապաշտօնապէս հաղորդում է այդ առթիւ որ կառավարութիւնն ամենախիստ միջոցներ է ձեռք առել ամենայն կերպ արգելելու համար անիշխանականների բոլոր գործողութիւնները:

խմբիցը կ'ասես քրտնքի ու արեան գոլորշի է բարձրանում:

Բարոնը հէնց որ նկատեց երկու սիրահարներին, ուղիղ քշեց նոցա մօտ և ձիու վրայից, զայրացած նոցա նայելով, ընդհատուող ձայնով գոչեց.

—Ա՜, այ դուք ինչպէս էք վերաբերւում իմ արգելքներին: Դժոխքը վկայ, պարոն Բօղուէն, որովհետեւ յիշողութիւնը թողնում է ձեզ, ես կամենում եմ նորան ամրացնել ձեր կոկորդի մէջ:

Նա հանում է իւր որսի դանակը, որ դեռ կարմիր է գազանի արիւնից...

Ինձ հետ միասին,—ասում է Ժըննիէ, ծածկելով իւր մարմնով Բօղուէնի մարմինը:

Այս թանկագին կուրծքի առաջ զէնքը ցած է ընկնում... Բայց բարոնը շուտ գտաւ իւր վրէժխնդրութեան եղանակը. նա գէն ձգեց դանակը, իջաւ ձիուց, ձեռը դրեց երիտասարդի ուսին.

—Լա՛ւ, ասաց նա. որովհետեւ դուք սիրում էք միմեանց, ես բնաւ չեմ կամենում ձեզ անջատել, այլ ընդհակառակը՝ միացնել...

Եւ մի անողորմ ժպիտով ցոյց տալով վերեւը, զառիվայր ժայռի կատարին կանգնած մատուռը՝ ասաց.

—Դուք աղջկանս ժամ էք տանում, պարոն: Ֆի՜. ասպետի վայել չէ թողնել որ այսպիսի մի նազելի օրիորդ այս ձիւնովը ոտով գնայ: Աւելի լաւն արէք. վերցրէք նորան ձեռներիդ վրայ—ես թոյլ եմ տալիս—և տարէք մինչեւ մատուռը: Եթէ դուք այդ կարողանաք անել առանց մի վայրկեան կանգ առնելու կամ հանգստանալու, երդւում եմ Աստուծով որ Ժըննիէն ձերն է իբրեւ պարգեւ ձեր նուրբ քաղաքավարութեան համար—և դուք կը պսակուիք նորա հետ վաղն իսկ հէնց այն սեղանի առաջ, ուր որ պիտի տանէք նորան: Բայց եթէ ձեր ոյժերը թուլանան, եթէ դուք մի անգամից չբարձրանաք մինչեւ կատարը, ինքներդ երդուեցէք սրբերով՝ հրաժարուել նորանից և յանձնեցէք ձեզ իմ կամքին:

Այս խօսքերի վրայ ամէնքը դողացին: Այսպիսի մի պայման յանձն առնելը կընշանակէ յաղթուած լինել առաջուց: Երբէք մարդ չէր կարող՝ մի կին ձեռներին վրայ բռնած, կենդանի բարձրանալ այն զառիվայր ու սոթլիկ արահետով, որ մի քառորդ ժամուայ ճանապարհ է, այն էլ առանց որ և բեռի:

Բայց Բօղուէնի ի՞նչ փոյթն է: Նորան հնարաւորութիւն են տալիս իւր սիրեցեալի հետ ամուսնանալու... Նա ուրիշ ոչինչ չէ հասկանում... Նա զգում է որ երիտասարդ է, եռանդուն ու քաջ: Վերջապէս նա սիրում է: Եւ եթէ ոյժը պակասի, սէրը նորան ոյժ կը տայ:

—Ընդունում եմ,—ասաց նա պարզութեամբ:

Յետոյ դառնալով օրիորդին՝ ասաց.

—Եկէք ձեռներիս վրայ, սիրելիս, և տուէք ինձ ձեր աչքերը. . . . .

. . . .

Մարմինը յետ ձգած, ամուր ոտներով նա բարձրանում է, բարձրանում և տանում է իւր թանկագին բեռը:

Ժըննիէն նորա վզովը փաթաթուած՝ աշխատում է թեթեւ լինել և քնքշութեամբ սիրտ է տալիս նորան ձայնով. Բօղուէնը ժպտում է և սիրոյ ու երիտասարդութեան ներշնչած հաւատով կրկնում է.

—Ես կը հասնեմ այնտեղ, կը հասնեմ այնտեղ:

Ահա նա ճանապարհի կիսումն է, և ցածումը կանգնածներից ամէն մէկը զարմանում է նորա ոյժի և ճարպիկութեան վրայ: Բայց ճանապարհի երկրորդ կէսն աւելի զառիվայր է քան առաջինը, ձիւնն աւելի թանձր է ու խոր. . . Բօղուէնն ըզգում է, որ ոյժերը թուլանում են. թանկագին մարմինը, որ փոքր ինչ առաջ այնպէս թեթեւ էր, սկսում է ծանրանալ նորա փայտացած ձեռների վրայ... Բայց նա չէ վհատում և ասում է՝ աշխատելով որ ձայնը հաստատուն լինի.

—Անգին սիրելիս, կրկնիր որ ինձ սիրում ես. նայիր իմ աչքերին, որ քո աչքերից ես կեանք առնեմ:

Նա բարձրանում է, շարունակ բարձրանում. . . Ամէն մի քայլը նորան մօտեցնում է իւր ցանկալի նպատակին. . . Աւա՜ղ, նորա խոնջած ոտներն սկսում են դողդողալ, կուրծքը բաբախում է ուժգին, արիւնը եռում է նորա ականջներում, աչքերը մթագնում են. . . Ո՛հ, մի վայրկեան միայն հանգստանայ, մի վայրկեան միայն,—և նա հաւատացած է որ յաղթութիւնը իւրն է, նա կը հասնի ժայռի կատարին. . . Բայց նա զգում է, որ բարոնը հետեւում է իրան, նորա հայեացքը չէ հեռանում իրանից.. Ո՛չ, ո՛չ, արքայութեան բոլոր սրբերը վկայ, նա չի թուլանայ: Նպատակին մօտեցել է, նա կանգ չի առնիլ ճանապարհին: Ժըննիէը դողում է նորա հետ միասին, տանջւում է նորա հետ... Ինչո՞ւ նորա վրայ ծանրացած այս մարմինը չէ կարող փոքրանալ, հալուել. . . Սոսկալի բան է. Ժըննիէը նորան պաշտում է, բայց նորա կորստեան պատճառը պիտի դառնայ:

—Աղօթեցիր, սիրելիս, աղօթեցիր:

—Ես կը հասնեմ,—կրկնում է նա,—կը հասնեմ այնտեղ:

—

Ցածից աղմկալից բացագանչութիւններ են լսւում.

—Ահա հասաւ, հասաւ:

Այո, ամէն բանից հզօր սէրը յաղթանակեց... Ժայռի կատարին երեւում է բարձրահասակ Բօղուէնը, Ժըննիէը ձեռքին:

—Ծնո՜նդ, ծնո՜նդ,—գոչում է ամբոխը խնդագին:

Բայց յանկարծ աղաղակները դադարում են: Նպատակին հասնելուն պէս Բօղուէնը գետին է փռւում... Եւ տեսնում են Ժըննիէն, խոյն ոտքի է կանգնում, խոնարհւում է նորա վրայ, գրկում է նորան... Անտարակոյս, գերմարդկային յոգնածութիւնից ջարդուած ասպետն էլ չէ կարողացել առաջ գնալ...

Ի՞նչ փոյթ. նա կատարել է իւր ըստանձնած գործը, նա յաղթող, նա կ'ամուսնանայ իւր սիրածի հետ...

Հեռու, շատ հեռու լսւում է մի յուսահատական սուր ճիչ... Եւ ահա Ժըննիէը, արտասուաթոր աչքերով, մազերը քամուն տուած, ձեռները դէպի երկինք է բարձրացնում և ընկնում է Բօղուէնի կուրծքի վրայ:

Բարոն դը Մալօնէն բոլորի հետ միասին շտապում է դէպի զառիվայրը, բարձրանում է ժայռի կատարը և վազում է դէպի իւր դուստրը...

—Ժըննիե, Ժըննիե, խօսիր պատասխանիր ինձ:

Ժըննիէը կիսատ բաց է անում աչքերը, բայց դեռ չէ կարողանում խօսել:

—Զաւակս... սիրելի մանուկս... Դու նորա կինը կը լինիս... ամէն բան կըստանաս, ինչ որ կամենաս... Միայն ուշքի արի... Նայիր ինձ... պատասխանիր ինձ...

Երիտասարդ օրիորդը ծունկ չոքած ցոյց է տալիս իւր գետնին տարածուած սիրեցեալին և ասում է.

—Դուք նորան սպանեցիք, հայր իմ, և ես մեռնում եմ դորանից:

...Նա մի հայեացք ձգեց իւր շուրջը, դժուարութեամբ ժպտաց... և ընկաւ մեռած իւր սիրեցեալի անշնչացած մարմնի վրայ:

—

Բարոն դը Մալօնէն իւր կեանքի մնացորդը գործ դրեց այս կրկնակի մահուան յանցանքը քաւելու համար:

Նոյն այս ժայռի վրայ, ամենամեծ դժուարութիւններով, նա, այն անհաւատը, շինել տուեց մի հոյակապ մենաստան և այդ եկեղեցու մէջ մի գերեզման մարմարիոնից ու ոսկուց, ուր թաղել տուաւ կողք կողքի Ժըննիէին ու Բօղուէնին, որպէսզի միացած լինեն յաւիտենականութեան մէջ:

Պ. դը Մալօնէն անձամբ մասնակցում էր այս աշխատանքներին. հող էր փորում, դաճ էր խառնում, երկաթէ բրով ժայռի կտորներ էր պոկում. այնուհետեւ, հինգ տարի յետոյ, իւր պարտականութիւնը կատարելով՝ նա խուզեց մօրուքն ու մազերը, գլխին աճիւն ցանեց և կրօնաւոր դարձաւ:

Նա դարձաւ այդ մենաստանի վանահայր, և երկար ապրեց՝ աղօթելով ու ապաշխարութեամբ: Երբ որ նա մեռաւ, նորան թաղեցին իւր ցանկութեան համաձայն Ժըննիէի ու Բօղուէնի շքեղ դամբանի ոտքի կողմը մի պարզ քարի տակ, առանց որ և արձանագրութեան:

Եւ երկար տարիների ընթացքում այդ մենաստանը կոչւում էր այն երկրումը «Երկու սիրահարների մենաստան»:

J. Normand
Contes à Madame.

—Ձերբակալուած են Էտիեան և Ջեակօ անիշխանականները, որ ամենաեռանդուն կերպով աշխատել են պարլամենտի նստաշրջանի բացման օրը ցոյցեր պատրաստելու համար:

ԱՆԳԼԻԱ. — Դուբլինի պայթման գործը եռանդով քննում է Օ'Դօննել ոստիկանապետը: Շատ վկաներ արդէն հարց ու փորձի են ենթարկուած, բայց նոցա յուցմունքները գաղտնի են պահուում:

Ընդհանրապէս կարծում են որ այդ պայթումն ուղղուած է եղել Ջօն Մօուլէյի դէմ, որին սպանելու նպատակով մի ամբողջ դաւադրութիւն է եղել կազմած, որ բացուած է, ինչպէս հաղորդում է Birmingh. Post լրագիրը:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Դեկտեմբերի 31-ից.

ՊԱՐԻԶ.—Հերքվում է այն լուրը, որպէս թէ Կարնօն ֆինանսների նախարար եղած միջոցին արգելք է եղել Ռուսիայի գեկուցմանը, որի մէջ նա դատապարտելիս է եղել Պանամայի ջրանցքը շինելու գործը: Քննութիւնից երևացել է, որ Էյֆէլը Պանամայի ջրանցքի աշխատութեան համար 33 միլիոն ֆրանկ է ստացել, որից միայն 4 կամ 5 միլիոն է ծախսել:

ԲԵՐԼԻՆ.—Զինուորական օրինագծի յանձնաժողովում կանցլերն ասաց, որ ոչ պետութիւնների և ոչ կառավարութիւնների մինչև անհաճոյ յարաբերութիւն չկայ, բայց և այնպէս պէտք է ի նկատի առնել Գերմանիայի զինուորական ույժերը Ֆրանսիայի և Ռուսիայի հետ համեմատած: Գերմանիան ստիպուած կլինի ընդունել եռապետական դաշնակցութեան թըշնամիների գլխաւոր ույժերը. գործքի թիւն անբաւարար է:

Յունվարի 1-ից.

ՓԱՐԻԶ.—Ասում են Ֆրէյսինէն հարց ու փորձի ենթարկուեց Պանամայի ընկերութեան փողերից մի քանի միլիոն ֆրանկ զինուորական և դիպլոմատիքական թղթեր ձեռք բերելու նպատակով, որոնք շատ մեծ նշանակութիւն ունեին Ֆրանսիայի համար:

Պատգամաւորների ժողովի այսօրուայ նիստում նոր նախագահ Կազիմիր Պէրիէն ճառ խօսեց, որի մէջ ասաց, որ առանձին անհատների յանցանքները չեն կարող հասարակապետութեան վերաբերուել և հասարակապետութիւնը կըկարողանայ գտնել յանցաւորներին և գործուած յանցանքները պատժել: Ճառի վերջում նախագահը կոչումն արեց ժողովի սառնասրտութեան ու միութեան: Ճառը բուռն ծափահարութիւններ առաջացրեց: Բուլբարը հարցապնդում արեց, որի մէջ պատճառաբանում է ընդհանուր ընտրութիւնների ժամանակամիջոցը նշանակելու պահանջը: Ռիբօն պատասխանեց, թէ հարկաւոր է արդարադատութեան կատարեալ ազատութիւն տալ և նորա բոլոր միջոցները գործադրել, որպէս զի կարող լինի իւր սկսած գործը մինչև վերջը տանել. անձնաւորութիւններին վերաբերեալ ոչ մի հանգամանքի առաջ արդարադատութիւնը կանգ չի առնիլ. եթէ բարձրագոյն դատարանի հարց զարթելու լինի, դրա վճիռը պատգամաւորների ժողովից կախուած կլինի, եթէ պատգամաւորների ժողովը գործը իւր սեպհական ընթացքին թողնելու լինի, դա բնական ընթացքով կառաջանայ արդարադատութեան առջև: (Ծափահարութիւններ): Թող պատգամաւորների ժողովը նորից իւր գործերով զբաղուի և թոյլ տայ արդարադատութեան իւր գործն աւարտելու. երբ հասարակապետականները նորից հասարակութեան առաջը կ'ելնեն, նրանք այդ կարող են անել համարձակ, վստահ կերպով, բայց այժմ ընտրութիւնների ժամանակամիջոցը որոշել անհնար է: (Ծափահարութիւններ):

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունուար. ներքին 1-ին փոխառութեան կատարուած վիճակախաղի ժամանակ գլխաւոր գումարները տարան հետևեալ տոմսերը.

№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը.	№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը.
7,373	7	200,000	14,500	16	1000 ռուբլի
3,734	46	75,000	5,089	38	
2,699	3	40,000	3,506	36	
8,572	47	25,000	3,895	45	
11,503	8	10,000	9,792	43	
17,749	23	10,000	2,988	43	
7,487	45	10,000	395	12	
17,954	13	8,000	12,062	35	
15,686	27	8,000	4,527	7	
15,487	36	8,000	8,964	40	
18,217	7	8,000	12,072	7	
19,689	41	8,000	319	30	
15,947	46	5,000 ռուբլի	8,871	28	
13,055	16		1,645	33	
16,224	7		14,416	13	
10,316	36		18,304	50	
4	48		11,238	37	
14,362	24		15,231	43	
1,370	9		1,694	40	
6,212	27		14,428	50	

Յունուարի 2-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երէկ առաւօտեան կայսերական մեծութիւնները ներկայ էին ձմեռուան պալատի եկեղեցում հանդիսաւոր ժամերգութեան, իսկ յետոյ ընդունեցին շնորհաւորութիւններ:

Երէկ երեկոյեան ժամանեց Պետերբուրգ Բուխարայի էմիրը, որդու և բազմաթիւ հետևորդների հետ: Էմիրի համար բնակարան Էրմիտաժումն է յատկացրած:

«Նօվ. Վր.»-ն ասում է. Մ. Ն. Օստրովսկու՝ օրէնքների դեպարտամենտի նախագահ նշանակուելը հասարակութեան մէջ բացատրվում է որպէս երկրագործութեան նախարարութեան շուտափոյթ երագործման նըշան. ասում են, թէ մի քանի ժամանակ պետական կալուածների նախարարի պաշտօնը թափուր կըմնայ. երեք թեկնածուների անուն են տալիս և երեքն էլ հարուստ հողատէրեր են, նրանցից մէկը կարճ ժամանակ ճանապարհների հաղորդակցութեան նախարար է եղել:

Յունվարի 4-ից.

ՓԱՐԻԶ. — Երէկ ձերբակալուեց Բուդա-Պեշտի «Hirlap» լրագրի թըղթակից Սէլէյին՝ բարեկամ պետութեանց դեսպանների վերաբերեալ առած զրպարտութեան համար. Թըղթակիցը Ֆրանսիայից կ'արտաքսուի. Ֆրանսիայից կ'արտաքսուին նաև գերմանական մի լրագրի և իտալական մի լրագրի թղթակիցներ: Ռիբօն ցաւ յայտնեց, որ Ֆրանսիացի երկու լրագիրներ հրատարակել էին այդ զըրպարտութիւնները:

Պանամեան գործի քաղաքացիական մասի քննութիւնը վերջացած է:

ՋԱՆԱԶԱՆ

Սիմֆերօպօլից հեռագրում են դեկտ. 21-ով «Մօսկ. Վեդ.» լրագրին, որ Բերդեանս գաւառի Ելիզավետովկա աւանում մի գիւղացի մէկ միլիոնի գանձ է գտել, որ բաղկացած է XVII դարու ոսկիներից:

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:

ԲԺԻՇԿՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի:

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—$11^1/_4$—$12^1/_2$ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.

Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—$12^1/_4$—1 ժ. մանկաբարձական և կանանց ց.

Ա. Գ. ԿԱՐԱԳԵԶԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5-6 ժ. երեխայոց և ներքին ց.

Ի. Վ. ՉԵՊՈՒԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., Բժիշկա-խորհրդացուցական հետազօտութիւն խլխի և մէզի:

Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (և մորթու) և վիրաբուժութեան:

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—$7^1/_4$ ժ. ականջի, կոկորդի, քթի և նեարդային ց. (ելեքտրաբուժութիւն և մարզումն):

Վճար—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր., և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում. Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում. Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Երկաթուղու փոստային - մարդատար Վլադիկավկազից դուրս է գալիս դէպի Ռոստով առաւօտեան 10 ժ. և 30 ր.:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ:

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը, (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Չորեքշաբթի օրերը, գիշերուայ ժամը $11^1/_2$-ին, խուճապ ընթացքով Սեւաստոպօլի վրայով:

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին Նովօրոսիյսկի Կերչի վրայով:

Բաթում է հասնում.

Երկուշաբթի օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան, ուղիղ ընթացքով Սեւաստոպօլի վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԴ

Վենետիկոյ Ս. Ղազարու Տպարանի Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանելու, թէ Հ. Գ. Վ. Մ. Ալիշանի «Սիսական» մեծագործ երկասիրութեան տպագրութիւնն աւարտած է, ուստի կըխնդրուի մեր մեծ. բաժանորդներէն, որք կանխիկ վճարած են բաժանորդագինը, վերադարձնել իրենց ղրկուած ընկալագրերն, իսկ որոնք դեռ չեն վճարած, կամ մասն մի վճարած են, կը խնդրուի որ ընկալագրերուն հետ մնացած գրամն ալ յղեն, որպէս զի կարենան այն հրատարակութիւնն ընդունել:

Տեսչութիւն Մխիթարեան Տպարանին:

(2—2)

Parfumerie Ganterie
MODES
H. BERLEMONT
COIFFEUR
de S. A. I. le Grand Duc
MICHEL NICOLAÉVITCH

Bonneterie pour hommes. Chapeaux pour dames. Fleurs, plumes. Maroquinerie, ciseaux, rasoirs. Cravates, mouchoirs. Brosserie. Parfumerie française et anglaise des premières maisons.

Salon de coiffures pour dames.

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ:
Берлемонъ, Дворцовая улица.
(91) (100—41)

Սեպտեմբերի 1-ից Երևանեան հրապարակի վրայ, քաղաքային տանը, դեղավաճառանոցին կից
ԲԱՑՈՒԱԾ Է
ԴԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ
ՆԻՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Մ. Ի. ԱՂ ՄՈՒՐՕՎԻ
(78) (100—30)

1893 թուի յունվարի 1-ից
ԲԵԼ-ՎԻՒ ՌԵՍՏՕՐԱՆԸ

կը փոխադրուի Վելեամինովսկի փողոց՝ երրորդ գիմնազիոնի դիմաց Թումանեանի տունը՝ ՀԻՒՐԱՆՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ անուամբ. ունի ընտիր կահաւորեալ սենեակներ և ճաշարան մատչելի գներով:
(147) (5—4)

ԹԻՖԼԻԶԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիւրակէ, յունվարի 10-ին, լինելու է

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

Սկիզբն է 9 ժամին: Զինուորականները պէտք է նշանազգեստներ կրեն, իսկ միւսները պէտք է ֆրակով կամ տեղական հագուստներով լինին:

Տոմսակները՝ իւրաքանչիւրը 2 ռ. 10 կ. արժողութեամբ կարելի է ձեռք բերել ժողովարանի շվէյցարից:

(2—1)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՀԱՄԱԶԱՍՊ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տուն №№ 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտները 8—12 ժամը. երեկոները 4—6 ժամը:

Իսկ կիւրակի և տօն օրերին առաւօտեան 8—2 ժամը կէսօրից յետոյ:

(2) (150—137)

Ոսկէ մեդալ Թիֆլիզ 1889 Թ. — Ոսկէ մեդալ Կազան 1890 Թ.

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՒԻ

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ
ԹԻՖԼԻԶՈՒՄ

ՀԱՅԻ ԱՐԱՂ, ՍՊԻՐՏ, ԿՕՆԵԱԿ, ՌՕՄ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼԻԿԵՕՐՆԵՐ:

Պէտք է դիմել.—Въ главную контору **Д. З. Сараджева** въ Тифлисѣ.

(117) (50—22)

ՍԱՐԱՏՈՎԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻ

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ

(Թիֆլիզ, Սօլօլակի փողոց, տուն Աղաբաբեանցի)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
«Ա. ԲԵՆԴԻՐ և ՈՐԴԻՔ, Ա. ՍՏԵՊԱՆՈՎ և Վ. ԲԵՆԴԻՐ»

ՍԱՐՊԻՆԿԱՆ կտաւի մի ընտիր տեսակն է, որ ձեռքով է գործվում նուրբ անգլիական բամբակեայ մասծից. տեսքով շատ նման է բատիստի և զեֆիրի, իսկ արժանաւորութեամբ և գոյների դիմացկունութեամբ գերազանց է նրանցից:

ՍԱՐՊԻՆԿԱՅԻՑ կարում են կանանց համար շատ գեղեցիկ, թեթև դերիաներ, կապոտներ, կօֆտաներ, ցերեկուայ և գիշերուայ շապիկներ, երեխայոց համար շորեր և տղամարդոց համար շատ վայելուչ շապիկներ:

Գները գործարանի գներ են. արշինը 12-ից մինչև 45 կոպէկ:

Այն օտարաքաղաքացիք, որոնք ցանկանում են ունենալ մեր կտաւները կարող են նմուշներ պահանջել, ուղարկելով ապահովեալ նամակով երեք եօթը կոպէկանոց մարկա:

Պ. Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(127) (18—13)

Открыта подписка на 1893 годъ
НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ
„ДОНСКАЯ ПЧЕЛА“
(годъ XVIII).

Цѣль газеты—служеніе интересамъ Приазовья, Донской Области и Сѣвернаго Кавказа; разработка вопросовъ, касающихся экономической жизни этихъ районовъ, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій, текущія яленія и мѣстныя новости.

Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей въ „Донской Пчелѣ“ имѣетъ всегда обширное мѣсто.

Торговый отдѣлъ „Донской Пчелы“ доведенъ до самыхъ широкихъ размѣровъ; коммерческія свѣдѣнія, цѣны Ростовскаго, Таганрогскаго, Новороссійскаго и другихъ торговыхъ рынковъ. Этотъ отдѣлъ особено важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской областей, Екатеринославской, Воронежской и Ставропольскгй губерній, гдѣ „Донская Пчела“ уже успѣла получить достаточную извѣстность, какъ необходимое подспорье для торговыхъ сдѣлокъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА
СЪ ДОСТАВКОЙ и ПЕРЕСЫЛКОЙ:

на годъ	9 р. —	на 3 мѣсяца	2 р. 50 к.
„ полгода	5 р. —	„ 1 мѣсяцъ	1 р. — „

За перемѣну адреса взимается 30 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи „Донской Пчелы“, въ Ростовѣ на-Дону.

Контора покорнѣйше проситъ г.г. иногородныхъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

ПРЕМІЯ. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20 Декабря сего 1892 года **подписныя деньги за 1893 годъ**, будетъ разосланъ БЕЗПЛАТНО **Донско-Азовскій** русско-армянскій **КАЛЕНДАРЬ** на 1893 г.

Редакторъ-Издатель **И. А. Теръ-Абраміанъ.**